Կոնդակ յանուն եւ ի պատասխանի դրութեան երբեմն Թէհրանու դեսպանատան Ռուսական եկեղեցւոյ վանահայր Անտիրիոս Ա.ռնջայի, որով գոհունակութիւն յայտնեցով մի պարսկագործ ցուցակ նուիրելուն համար միանգամայն իբրեւ Խր Հայրապետական սիրոյ եւ օրհնութեան յիշատակ շնորհումէ նորան մի հատ ոսկի մինէտ-դործ եւ պատկերազարդ տուփ։ Սեպտ. 20. Թ. 413։

Կոնդակ յանուն Գրիգոր Եպիսկոպոսի Աղափիրեանց, որով կարդումէ նորան Տփխիսու Մարիամեան Յովնանեան օրիորդաց վարժարանի հոգաբարձութեան խորհրդարանի նախագահութեան պաշտօնի մէջ։ Սեպտ. 23. Թ. 409։

Կոնդակ յանուն եւ ի պատասխանի Կովկասեան արքունական դպրոցաց հոգաբարձու Պ. Եանովսկոյ, որով փոխանակումէ նորան շնորհակալութիւն Կովկասեան ուսումնարանական շրջանի յիշատակարանը եւ ուսումնարանաց բարեշրջը ուղարկելուն համար։ Հոկտ. 14. Թ. 446։

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ.

Ի 15 Օգոստոսի 1880 ամի. Համաձայն մակագրութեան Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց ի վերայ հրաժարագրոյ փոխտնորդի Գորւոյ բարեշնորհ Գրիգոր Վարդապետի Գառնակերեանց փոխադրել զնա ի պաշտօն փոխանորդութեան Հին—Նախիջեւանու, իսկ Հոգեւոր Կառավարութեան Գորւոյ պատուիրել յետ ստանալոյ ի յիշեալ Գրիգոր վարդապետէ զամենայն պաշտօնական գործս և զհաշիւս սպասել առանձին տնօրէնութեան Սինոդի։

Ի 15 Սեպտ. 1880 ամի. Որովհետև Գերապ. Անդրէաս Արքեպիսկոպոսն Տեսուչն Գ. Ճեմարանի Մայր Աթոռոյս արդէն հաստատեալ է ի պաշտօն Առաջնորդութեան թեմին Արցախու, ուստի ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի Ազգիս հրամանագրել թեմական Ատենի Հայոց Արցախոյ, սկսեալ ի 1էն Սեպտ. տարւոյս յամենայն հարկաւոր դէպս դիմել առ Նորին Գերապատութիւնն իբրև առ թեմական Առաջնորդ և Ատենապետ Նորին ի խնդիրս կարևորս մինչ ցառանձին տնօրէնութիւն Վեհափառ Հայրապետի Ազգիս. իսկ զբարեշնորհ Արիստակէս Վարդապետն Սեղրակեան, որ կարգեալ է ի պաշտօն ուսուցչութեան Գէորգեան Ճեմարանի, համարել արձակեալ ի փոխանորդական պաշտօնէ։

Ի 19 Սեպտ. 1880. Ընկալեալ ի յարգանս դիմդիր Տեսչի Գայիանեան Օրիորդական միջնակարգ ուսումնարանի Հայոց Երևանայ Յովսէփ Աւագ քահանայի Մելեանց, մանաւանդ ունելով ի նկատի զնուազութիւն արդեանց Նորին, հրամանագրել Կոնսիստորիային Երևանայ պարտաւորել զերեցփոխանն Ս. Պետրոս և Պօղոս Եկեղեցւոյն Երևան քաղաքի տալ վարչութեան յիշեալ ուսումնարանի, յետ կարի խնայողաբար ծախուցն, զարդիւնս յաւելեալս ի տարեկան ծախուց յիշեալ եկեղեցւոյն մինչ զբարւոքումն դրութեան տնտեսական մասին Նորին. մանաւանդ՝ զի այնու մարթասցին բանալ ի նմին չորրորդ դասարան ի պէտս դաստիարակութեան և յառաջադիմութեան սանուց Նորին։

24 Հոկտ. 1880 ամի. Որովհետև Յարութիւն քահանայն Խաչերեսեանց Արմաւիր գեղջ Կուբանու նահանգի վարէ կեանս հակառակ իւրումն կոչման, ուստի ի սաստ և ի զգուշութիւն նմա հրամանագրել Կոնսիստորիային Աստրախանայ դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ զամիսս երիս և տալ ապաշխարել առ դրան եկեղեցւոյն առանց փիլոնի. իսկ յետ լրման ժամանակի ապաշխարանաց պարտաւորել զնա ձեռագրաւ հեռի կալ այսուհետև յանվայել ընթացից, ի հակառակ դէպս սպառնալով զենթարկումն ընդ առաւել սաստկագոյն պատժոյ։

15 Հոկտ. 1880 ամի. Ըստ նախընթաց հաճութեան Նորին Վեհափառութեան արձակել զԱրիստակէս վարդապետն Դաւթեան ի փոխանորդս և յանդամակցս պաշտօնէ Հոգ. Կառավարութեան Նոր—Նախիջևանայ ի 1էն հոկտ. տարւոյս և ի տեղի նորա ժամանակաւորապէս կարգել յանդամակցութիւն նոյն կառավարութեան զվանահայր սրբոյ Խաչի վանուց զՊետրոս վարդապետ Թողլով ի վերայ նորա և զվանահայրական պաշտօնն մինչ ցառանձին տնօրէնութիւն Սինոդիս։

17 Հոկտ. 1880 ամի. Որովհետև Յովհաննէս աւագ քահանայն Տփխիսոյ գիտակցաբար կատարեալ է զշնաս պսակ ի ծխոյ այլոյ քահանայի այնէ Աղէքսանդրի Արզութեանց ընդ Եղիսաբէթի Խիզանեանց, հրամայել դադարացուցանել զնա ի քահանայագործութենէ անորոշ ժամանակաւ, բառնալ ի նմանէ զպատիւ աւագ քահանայութեան վերադարձուցմամբ ի Սինոդս զվկայագիր այնորիկ և զպսակն զայն ըստ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ համարել անվաւէր։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅՑ.

Առաջիկայ Դեկտեմբեր ամսում «Արարատ» ամսագրոյս երկրորդ տասներորդ շրջանը լրանալով՝ 1881 թուականի Յունվարից պէտք Հորիզորդ տասներորդ (ԺԴ) շրջանն սկսի։

Ուստի կխնդրեմք մեր Գործակալներէն, որպէս զի փութան օր յառաջ ցՅունվար ամիս առաջակայ տարւոյ ծանուցանել Տպ. Ժողովոյն բաժանորդագրուիլ ցանկացողաց անուանքը ճիշդ հասցէներով։

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի Աղգայինք, ինչպէս մինչև ցարդ համակրած են Արարատ ամսագրոյս և իւրեանց խրախուսանքը չեն պակցած, նոյնպէս կփութան յառաջակայում և միշտ միևնոյն զգացմամբք բաժանորդագրուիլ և օգնել սմին։

Արարատի թերթից քանակութիւն, ուղղութիւնն և բովանդակութեանց ծրագիրը և տարեկան բաժանորդագին մի և նոյնը կմնան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։